

ԹԱՆԵՐ ԱՔՉԱՄ. «ԱՆԱՏՈՒԿԱՅՈՒՄ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՂԵԼ Է»

Հունիսի 28-ին ընդհանուր ընտրությունների նախօրեին Կանադայի թուրք հանրությունը «Հայոց ցեղասպանության օրինագծին» կողմ քվեարկող քեկնածուներին չընտրելու ուղղությամբ Կանադայի 19 թուրքական միության շրջանակներում համագործակցության ուղղիներ էր որոնում, իսկ մյուս կողմից՝ ԱՄՆ Մինեսոտա համալսարանի դասախոս Թաներ Աքչամն իր Տորոնտոյում տված սեմինարում պաշտպատեց «Ամատոլիայում հայկական ցեղասպանություն եղել է» քեզիսը: Ներկայացնում ենք Թաներ Աքչամի հետ հարցազրույցը:

- Մոնրեալում և Տորոնտոյում կազմակերպված հավաքույթներին դուք պաշտպանում էիք «Հայոց ցեղասպանությունը եղել է» քեզիսը և նորից Տորոնտո եք գալու, ինչո՞ւ:

- Օգոստոս ամսվա սկզբում Մինեսոտա համալսարանի (ԱՄՆ) և Ջորյան ինստիտուտի միասնաբար կազմակերպած «Մարդու իրավունքներ և ցեղասպանություն» վերնագրով 15-օրյա ամառային դպրոցում կդասախոսեմ «Թուրքիայ լարվածությունը, երկիւստությունը և լուծումն ճանապարհները» ելույթերի շուրջ:

- Կոնֆերանսներում ձեր ակադեմիական-գիտական ինքնությունից բացի ստանձնո՞ւմ եք որևէ հիմնադրամի, կուսակցության կամ միության խոսնակությունը:

- Ես ակտիվ քաղաքականությունը թողել եմ 1986թ.: 80-ական թթ. ԶԲԿ (Զրդական բանվորական կուսակցության) հետ շատ արկածախնդիր մի շրջան ունեցա, ձախ շարժման մեջ ժողովրդավարական մի կառույցի համար էի աշխատում և քաղաքականությունում ահաբեկումների դեմ էի, դարձա ԶԲԿ-ի թիրախը: Շատ սիրելի մի քանի ընկերներս ԶԲԿ-ի կողմից սպանվեցին, և ես ուղղակի խզեցի կապս քաղաքականության հետ: Անշուշտ քաղաքականության մասին գրել եմ ու դեռ գրում եմ, բայց ուղղակի կապ չունեմ: 1988 թվականից կատարում եմ ակադեմիական աշխատանքներ:

- Մեմֆիսյան Չեզ ընդհանրապես հայկական ծագումով կառույցներն են կանչում, այդպե՞ս է:

- Ամերիկայում է այդպես:

- Իսկ Եվրոպայում:

ՀԱՂՈՐ-
ԴՈՒՄՆԵՐ



* Սույն հարցազրույցը վերցվել է 2004թ. հունիսի 23-ի www.sansursuz.com թուրքական ինտերնետային լրատվության էջից:

- Սա շատ հետաքրքիր է և նոր է մոդայիկ դարձել, հնում այսպիսի բան չկար: Վերջին 10-15 տարիներում Խորհրդային միության փլուզումից հետո էթնիկական ծագման հարցը մոդայիկ դարձավ: (Ծիծաղելով) Բոլորը մայում են իրենց էթնիկ ծագմանը: Աստված վկա ես գտարյուն թուրք եմ: Ղարսում «Ախսկա թուրքեր» են ասում մեզ: Մեր գերդաստանից որոշ մարդկանց հայկական հրոսակախմբերի կողմից սպանված լինելու հանգամանքը շատ հավանական է: Էթնիկական և նման կարգի բաներ իմ աշխատանքների վրա չեն ազդում, ես, վերջին հաշվով, ակադեմիկ գիտնական եմ և իբրև գիտական մարդ հետազոտում եմ նյութը:

- *«Անատոլիայում հայական ցեղասպանություն եղել է» ասող առաջին թուրք պատմաբանը Դո՞ւք եք:*

- Ինչքան գիտեմ ես եմ: Բայց պետք է ուշադիր լինել՝ «կարող է մեկը ինչ-որ մի տեղում ակադեմիական աշխատանք կատարել է» կարող է ասվել, բայց մի բան անվիճելի է, որ այս նյութի մասին առաջին թուրքերեն գիրք հրապարակողը՝ ես եմ և որ այդ մասին բացահայտ խոստով ել եմ ես:

- *Պատմությունը և քաղաքականությունը իրարից առկախ նյութեր են, չեն բաժանվում. ըստ Ձեզ՝ Թուրքիան ցեղասպանությունը ընդունելու դեպքում ինչպիսի՞ շահեր և կորուստներ կունենա:*

- Նրա միջազգային հեղինակությունը կբարձրանա, որն ինքնին շահավետ է: Դա Թուրքիայի ժողովրդավարացման տեսանկյունից շատ կարևոր է, որովհետև ժողովրդավարական ինքնությունը հանդուրժողականության, ներողամտության, եղբայրության և հավասարության վրա հենվող մի կուլտուրա է: Իսկ դրան պետք է հասնել պատմության անիրավությունների մասին բացխոսությամբ: Պատմության ընթացքում հանրության իրագործած վատ արարքների մասին մինչև չխոսեն ու չարտահայտվեն, նման երևույթների ի հայտ գալու հավանականությունը կավելանա: Ժողովրդավարացման ընթացքում Թուրքիայի առաջին շահը սա կլինի, իսկ երկրորդը՝ Թուրքիան այս հարցում շատ եկամուտներ կստանա: Այսօր Անատոլիայում դեռ կան հայկական մշակույթի հետքեր, օրինակ՝ Անի քաղաքը՝ Ղարսում շատ մեծ ու հոյակապ հուշարձաններից մեկն է: Եթե գնաք այնտեղ՝ մուտքն արգելված է, ժանդարմից հատուկ թույլտվություն եք վերցնում ու քաղաքում շրջելու ընթացքում ոչ մի հայկական բառ չեք տեսնում: Թողնեք ցեղասպանության ընդունումը, երկկողմանի հարաբերություններն ուղղելու պարագան, Անի քաղաքը վերանորոգելու և տուրիզմի բացելու դեպքում տարում միլիոնավոր դոլլարի եկամուտ կստացվի: Հայաստանի հետ հարաբերությունները զարգացնելու հարցում դրական քայլեր կնախաձեռնվեն: Միջազգային արենայում, հատկապես Ամերիկայում, ձեզ աջակցող վերին աստիճանի ուժեղ հայկական մի լոբի կունենաք: Սրանց մեծամասնությունը ծագումով Թուրքիայից եկած մարդիկ են: Կարելի է օրինակները բազմացնել:

- *Բարի, իսկ հայ հանրության տեսանկյունից, գիտակից կամ անգիտակից հայերը, որոնք ասում են. «Հայկական ցեղասպանություն եղել է», ի՞նչ են շահում:*

- Որևէ մի բան շահելու համար չեն ասում... Շատ պարզ մի հարց կա: Նրանք մեծացել են առանց հորեղբոր, քեռու, մորաքրոջ և մեծացել են... իրենց մորը և կենդանի մնացած բարեկամներին՝ գաղտնի անկյուններում լացելու տեսներով: Հետևաբար նրանց պատմությունները եթե լսեք, հարցը ավելի հանգիստ կդիտեք: Իհարկե որոշ քաղաքական կառույցներ

այս հարցը իբրև քաղաքական միջոց կարող են օգտագործել, բայց վերջում ոչ մի հանրություն. «...վա՛յ ինձ հետ պատմության ընթացքում մնան բուն է կատարվել, ես դա ի՞նչպես օգտագործեմ» ասելով հաշվարկ չի անի:

Հիմա ամենամեծ հարցը հիմնականում իրենց [հայերի] հանդես պարված այս պատմական անիրավության չընդունված լինելու հանգամանքն է: Ինչպես սեռային բռնության և բռնաբարման հարցում արված աշխատանքներից հայտնի է, մնան կարգի հարձակման ենթարկված... կանանց տեսանկյունից ամենամեծ խնդիրն իրենց արված դաժան արարքը մյուսների կողմից չընդունելն է: Հանրության հոգեբանությունն էլ սրա մնան է... հետևաբար ամենակարևոր քայլը, ինչպես բռնության ենթարկված կանանց բուժման ժամանակ, նախ պետք է ընդունենք բռնության ենթարկված լինելու հանգամանքը: Այս առումով ներկա դրությամբ թուրքահայ հարաբերությունների տեսանկյունից ամենամեծ հարցը հայ հասարակության գլխին եկածը՝ թուրքերի կողմից չգիտակցված լինելն է: Մենք պետք է ցույց տանք, որ նրանց այդ պատմությունները «գիտենք» և պատրաստ ենք նրանց լսել: Դրանից հետո հայ վրիժառուական գործողությունների և մնան հարցերի մասին կարող ենք խոսել ավելի հանգիստ:

- *Պատմաբանները ցեղասպանության մասին օգտագործում են մեկ՝ 1915-17 թթ., մեկ՝ 1915-1923 թթ.: Կարո՞ղ եմ իմանալ որ մեկն է ճիշտ:*

- Չեք կարող, որովհետև այս հարցում բոլորը տարբեր պատասխան կտան:

- *Չե՞զ եմ հարցնում:*

- Ես օգտագործում եմ 1915-1917 թթ. ըստ ինձ 1918-1922 թվականների կովկասյան իրադարձությունները «ցեղասպանության շարունակություն» որակելը շատ ճիշտ չի թվում: Ընդհանրապես հանրամատչելի մակարդակում և հայկական կազմակերպությունների քարոզչությունում օգտագործվում է 1915-1923 թթ.: Գործի քարոզչությունն ինձ չի հետաքրքրում: Այս հարցում լուրջ վիճաբանության դեպքում հարցը այսպես կարող է դրվել. «1918-1922 թթ. Կովկասում իրադարձությունները, 1915-1917 թթ. շարունակություն կա՞րելի է համարել, թե ոչ»:

Ըստ Խորհրդային [պատմագիտության] տվյալների Կովկասում 2-3 տարում սպանված հայերի թիվը 200 հազարից ավելի է: 1915թ. պաշտոն ստացած օսմանյան մի շարք սպաներ այս կոտորածներին նայում էին «կիսատ գործը ամբողջացնելու» ձևով: Բայց մույն շրջանում այնտեղ մուսուլմանական կոտորածներ ևս կային: Ես դրանց միայն վրիժառուական գործողությունների ձևով բացատրելու կոտմ չեմ: Թեև այս հարցի շուրջ շատ լուրջ մի աշխատանք չկա և մարդիկ հարցին նայում են «ուրիշի աչքում փուշ տեսնելու փոխարեն, թո՛ղ իր աչքի գերանը տեսնի» հասկացողությամբ: Այսինքն ոչ մեկը կողմնակից չէ իրեն որոշ հեռավորությունում պահելով՝ հանգիստ և պարզ խոսել: Դրա համար էլ մեր ձեռքում շատ լուրջ տվյալներ և թվեր չկան: 1915-1923 թթ. միջև շարունակություն տեսնելով, այդ ցեղասպանությունը 2 և 3 հանգրվանի ձևով բացատրող պատմաբաններ կան: Սա հենվում է 1918 թվականից հետո տարածաշրջանում պաշտոնավարող թուրք սպաների՝ 1915 թվականի «մաքրումները» կատարողների հետ մույն մտածողություն ունենալու հանգամանքով: Իսկապես մնան շարունակություն կա, բայց 1918-1922 թթ. իրադարձությունները ըստ իս ավելի շատ համապատասխանում է էթնիկական գտման: Այսինքն 1919թ. հետո հայկական գնդերը պարտված օսմանյան բանակի տեղը գրավելով,

երկու կողմերն էլ՝ հայ և մուսուլման, իրենց պետական սահմանն ընդունած տերիտորիան ցանկացան մաքրել՝ փոխադարձ իրար անհետացնելով և աքսորելով: Թուրքերը շատ ավելի ուժեղ էին, բնականաբար ավելի շատ հայեր վերացան:

- *Ցեղասպանության թվերի շուրջ էլ կա վիճաբանություն. 1.5 միլիոն², 800 հազար³, թե՛ 1.100 հազար:*

- Սա կարևոր չէ: Շատ անհմաստ վիճաբանություն է: Ակադեմիականների ծաղրած շատ հարցերի շարքում կարևոր տեղ են գրավում՝ թվերի շուրջ վիճաբանություն անողները: Այսինքն 1 միլիոն չլինի, 800 հազար լինի, պիտի չընդունենք, որ ցեղասպանություն է կատարվել: Եթե 600 հազար լինի, պիտի համարենք չի՞ եղել: 600 հազար, մարդիկ են չե՞ սա... Ստեպոդինի, ադցանի, վարունգի մասին չես խոսում, մարդկանց մասին ես խոսում: 1948թ. ՄԱԿ-ի ցեղասպանության սահմանումը «այսքան [մարդ] պիտի լինի» ասելով, մի թիվ չի տալիս: Հարավսլավիայում 7 հազար մուսուլման սպանելու մեղադրանքով մի սերբ գեներալ ցեղասպանության հանցանքով պատժվեց: Հետևաբար թվերը շատ կարևոր չեն: Ո՞ր թիվն է շրջանառվում: Աստված վկա՝ կա մի պաշտոնական թիվ: Դա էլ օսմանյան պաշտոնական թիվն է, ըստ 1919թ. օսմանյան Ներքին գործերի նախարարության պաշտոնական հայտարարության: Այդ շրջանում ձևավորված հանձնաժողովը 3 ամսվա հետազոտությունների արդյունքում վճռել է. «Մեր Առաջին համաշխարհային պատերազմում սպանված հայերի թիվը 800 հազար է»: Սա Մուստաֆա Քեմալի նաև Տամաթ Ֆերիթի օգտագործած թիվն է: 1927 թվին Գլխավոր սպայակույտի նախագահության հրապարակած «Առաջին համաշխարհային պատերազմում կորուստներ» անունով գրքում նշված է 800 հազար թիվը: Մրանից բացի թուրք պատմաբան Յուսուֆ Հիքմեդ Պալյուրն իր աշխատությունում գրում է. «այս թվերը ճիշտ են», հետգրությունում ավելացնում. «ըստ մեր ձեռքում ունեցած տվյալների»:

- ՄԱԿ-ի «ցեղասպանության» սահմանումում 1948 թվից հետո իրականացված դեպքե՞րը, թե՛ նրան նախորդող դեպքերն էլ են ևս այս նյութի բովանդակության մեջ մտնում և անվանվում «ցեղասպանություն»:

- Այս հարցը երկու հարթություն ունի: Իբրև սահմանում կարող եք օգտագործել հետևյալ փաստը. անցած ամիսներին թուրք-հայ հաշտեցման հանձնաժողովը միջազգային մի իրավաբանական ինստիտուտի դիմեց: Իրականում հայկական կողմը չէր ուզում դիմել, դեմ էր: Թուրքական կողմի պնդմամբ դիմումը կատարվեց: Ըստ Գյունդուզ Աբդանի ցեղասպանության իրավաբանական սահմանումը 1948 թվից առաջ չի կարելի կիրառել: Ըստ նրա՝ 1915 թվի պատահածներն իրաբանորեն «ցեղասպանություն» չի կարելի կոչել, որովհետև 1948 թվին հաստատված մի օրենք այդ թվականին նախորդող դեպքերում իբրև իրավունքի սկզբունք կիրառելը հնարավոր չէ: Վերջում Միջազգային իրավունքի ինստիտուտ դիմեցին: Ստացված պատասխանը շատ հստակ էր. «Իհարկե, ցեղասպանության սահմանումը 1948 թվին նախորդող դեպքերը սահմանելու համար կարող եք օգտագործել և 1915 թվի ապրումները և ցեղասպանության սահմանմանը համապատասխանում են, կարող եք օգտագործել»: Այստեղ տրամաբանությունը շատ պարզ է: Ասենք՝ քաղցկեղ հիվանդության անունն այսօր դրվեց, 5-10 տարի առաջ քաղցկեղից մահացած մարդուն պիտի

չկարողանա՞նք ասել. «քաղցկեղից հիվանդ եր»: Պիտի ասենք, բնականաբար:

- *Ըստ միջազգային իրավունքի սկզբունքների. «օրենքին նախորդող հանցանքները չի կարելի ապագային տարածել», նման պաշտպանություն խնդրո առարկա չի՞ կարող լինել:*

- Ըի՛շտ է, սա կարևոր և լուրջ պատճառաբանություն է: Պոզիտիվ օրենքի ընդհանուր սկզբունքն ասում է. «օրենքը դեպի անցյալ չի կարելի օգտագործել»: Հետևաբար 1948 թվին «ցեղասպանության» սահմանումը և սրան հետևած օրենսդրական կանոնադրությունը 1915 թվին իրավաբանորեն չկիրառելիությունը իբրև լուրջ պատճառաբանություն կարող է առաջ քաշվել, բայց սա ևս վիճահարույց նյութ է: Այս հարցում հակառակ պատճառաբանությունը ևս ուժեղ է: Օրինակ՝ Նյուրեմբերգի դատավարություններում նացիստներին դատելու իրավական հենքը կառուցված էր հրեաների սպանությունից հետո, այսինքն [օրենքը] դեպի հետ կիրառվեց:

- *Վիճաբանությունների հարթակներում «ցեղասպանություն», «աքտոր», «սպառնալուքայանը ճնշել» բառերը շատ անգամ իրար փոխարինում են: Այս հարցը ինչպե՞ս եք գնահատում:*

- Այս հարցումներն իրարից տարբեր են: «Ներքին պատերազմ» թեզիսը մոր հնարվեց ու արագ մի կողմ թողնվեց: Ինչքան գիտեմ ներքին պատերազմը Justin Mc Carty-ի հնարած մի բան էր, արվեց՝ գործին գիտական շապիկ հագցնելու, գիտական տեսք տալու համար: Թուրքական կողմն էլ «այս գործում մի իմաստություն կա» ձևով մտածելով այս թեզիսին գտածոի նման հարձակվեցին ու մի շարք մարդիկ սկսեցին ասել. «ներքին պատերազմ եղավ»: Բայց հիմա թուրքերը պաշտոնապես այս թեզիսից հրաժարվեցին, եթե անգամ անձամբ օգտագործողներ կան, սա պաշտոնական թուրքական թեզիս չէ: Թուրք Պատմության ընկերության նախագահ՝ Յուսուֆ Հալաջօղլուն իր վերջին գրքում ասում է, որ ոչ մի ձևով ներքին պատերազմ չի եղել: Իրավացի է, նման կարգի ներքին պատերազմ չկա: Ներքին պատերազմը, դա՛ երկու հակադիր կողմերի փոխադարձ պատերազմն է, այնպես չէ՞:

- *Այո՛, պատերազմի սահմանումն այդպես է...*

- Է, հիմա եղբայր, 1 միլիոն հային Անատոլիայի տարբեր տեղերից վերցնելով աքսորում են Սիրիա և ասում ենք՝ առկա է ներքին պատերազմ: Է, բա Աստծո ծառա, ո՞ր են այս պատերազմող հայերը: Մեկն էլ թո՛ղ ելնի, ձեր աքսորված հայերի շարասյան վրա հարձակվի... Եթե ներքին պատերազմ կա, ապա հակառակ կողմում եղող հայերը. «ոտո՛, այս թուրքերը մեր երեխաներին աքսորում են» ասելով, թո՛ղ շարասյան վրա հարձակվելով, թեկուզ 1-2 տեղ հայ աքսորյալներին ազատագրեին: Կամ՝ ընդհարումների առկայությունը պետք չէ՞: Այս հարցում խեղճ օսմանյան արիսխվներում «տվյալ շրջանով անցնելիս, մեր շարասյանը՝ մեր ներքին պատերազմած հայերը հարձակվեցին» ասող մի փաստաթուղթ, ոչ մի բան չկա: Օրվա դերակատարներից ոչ մեկը դեպքերը արձանագրելիս «մենք հայերի հետ ներքին պատերազմի մեջ էինք, դժվարությամբ մարդկանց աքսորեցինք պատերազմական շրջանից», նման մի բան կամ մի բան չի ասում: Թուրք Պատմության ընկերության նախագահ՝ Յուսուֆ Հալաջօղլուն ևս իրավացիորեն գրում է. «Շարասյունների ճանապարհին որևէ մի վատ դեպք չկար: Վերջին դարի ամենահաջող գաղթը իրականացվեց»: Իրոք այդպես է, որովհետև սպանություններն այս շարասյունների ուղղու

վրա հատուկ վայրերում տեղակայված Թեշքիլատ-ը Մահաուսայի (Հատուկ կազմակերպություն) գնդերի կողմից է կատարվել: Հետևաբար ներքին պատերազմ չկար:

- *Հայերի պարտադրված գաղթի ժամանակ սովից և ծարավից մահացած լինելը, չի կարելի «ցեղասպանություն» համարել տեսակետը առաջ քաշող պատմաբաններ կան:*

- Շատ կարևոր և տեխնիկական մի հարցի անդրադարձաք: Միջազգային «ցեղասպանության» սահմանումը ասում է. «Ցեղասպանության առկայության համար նպատակի գործոնը պետք է առկա լինի», այսինքն. «Նմադկանց ուրիշ տեղ աքսորման դեպքում, եթե մարդիկ մեռնում են, բայց այստեղ չկա սպանելու նպատակ, ապա՝ սա ցեղասպանություն չի կարելի անվանել»:

- *Բարի, նպատակը ինչպե՞ս կարող ենք հասկանալ:*

- Մի փաստաթուղթ է հարկավոր գտնել, որտեղ գրված լինի. «Իմ նապատակը հայերին սպանելն է, իրականում աքսորելը չէ՝»:

- *Կա՞ այդպիսի մի փաստաթուղթ:*

- Է՛, որ տեսաք այդպիսի փաստաթուղթ կքո՞ղնի: Ո՛չ մեկը... Նույնիսկ Հիտլերը «իմ նպատակը հրեաներին ամբողջությամբ անհետացնելն է» ասող մի փաստաթուղթ չի թողել: Հետևաբար, միջազգային իրավունքն ասում է. «Եթե անգամ նպատակը ապացուցող մի փաստաթուղթ էլ չլինի, եթե գործողությունների արդյունքում խնդրո առարկա խմբի վերացման հնարավորություն է ստեղծվում, նպատակի տարրը կհամարվի, և սա ցեղասպանություն կհամարվի»: Մեր օրինակում սպանելու նպատակով տեղահանումները սկսվում է 1915 թվի մայիսին և, ենթադրենք, որ թուրքական կողմը ոչ մի սպանելու նպատակ չուներ: Մայիս ամիսը անցնում է, անցնում է հունիսը, հուլիսը: Նոյեմբեր, դեկտեմբեր ամիսներն անցնում են: Հե՛յ, մարդիկ մեռնում են: Անընդհատ հեռագրեր են հասնում Ստամբուլ... Վերջում Ստամբուլի կառավարությունը նպատակաուղղված սխտեմատիկ կերպով հայերին եթե անգամ չի ուզում սպանել, իր գործողության արդյունքում մարդկանց կանոնավոր սպանությունների, անհետացումների մասին միշտ տեղյակ է լինում: Հակառակ սրա՝ գործը չի դադարեցվում և շարունակվում է, այսինքն մահվան դեպքերը գիտակցելով մինչև 1917 թիվը երկու տարվա ընթացքում իր գործողությունները շարունակում է: Հետևաբար, ի վիճակի չէ ասելու. «Իմ ընդհանրապես չուզած բանը պատահեց»: Ամենակարևորը՝ ոչ թե մի վայրից, այլ ամբողջ Անտուլիայից են տեղահանում հայերին: Հնում միայն «աքսորվեցին պատերազմական շրջանի հայերը» ասելով, հնարում էին: Իրենց հրապարակած օսմանյան փաստաթղթերում ի հայտ եկավ, որ Էդիրնեյից՝ Արդահան, Մուղլայից՝ Տրապիզոն, Բոլուից մինչև Կաստամունի ինչքան հայ որ ապրում էր՝ բոլորին իրենց բնակավայրերից տեղահանել են: Սրանից բացի, արդեն 1919-1922թթ. Ստամբուլի «Դժբեհիատ վե Թերակը»-ի դատավարություններում տեղահանումից անհետացման նպատակ հետապնդելու մասին բավականաչափ տվյալներ և փաստաթղթեր երևան հանվեցին: Սրանք կամ շրջաններին ուղարկված հեռագրեր, կամ էլ ականատեսների վկայություններ էին: Ականատեսներն էլ բանակի հրամանատար գեներալներ, նախարար և կուսակալներ, այսինքն՝ օսմանյան բյուրոկրատիայի տարրերն էին... Այս հարցում եթե ավելի շատ տեղեկություն եք ցանկանում, կարող եք նայել իմ «Մարդու իրավունքները և Հայակական հարցը» գիրքը:

- Բարի, հանգավորն ո՞վ է: Այս կատավարությունների և իշխանությունների շրջանակներում կարո՞ղ եք զննհատել:

- Ըստ մեր ձեռքի տակ եղած եղած տվյալների՝ ցեղասպանությունը «Իթքիհատ վե Թերակը»-ի կուսակցության գործն է: Որոշումը ըստ երևույթին կենտրոնական կոմիտեի մի շարք ժողովների կողմից է ընդունվել: Կատավարությունն այս գործին ոչ մի կերպ չի առնչվում, անգամ բավականին ուշ են իմանում իրադարձությունների մասին:

- Խնդրո առարկա ցեղասպանություն իրականացնող հանրություններն ովքե՞ր են, դահիճն ո՞վ է:

- Դահիճը Թեշկիլատ-ը Մահաուսայի զնդերն են: Սպանություններն իրագործել են՝ շրջակայքում եղող քրդական ցեղախմբերի՝ բանտերից մեր ենթադրությամբ 30000-ի հասնող ազատ արձակված դարտապարտյալները և բալկանյան-կովկասյան գաղթականներից բաղկացած Թեշկիլատ-ը Մահաուսայի հրոսակախմբերը: Սրանից բացի Բիթլիս, Մարտին, Սիիրթ և Վանի շրջակայքում ուղղակիորեն բանակային ստորաբաժանմունքները հայերին աքսորելուց առաջ իրենց գյուղերում անհետացրել են: Ինչպես եղել են քաղաքացիական հասարակությունից շարասյուններին հարձակվելով սպանություններ իրականացնողներ, բայց նույնպես եղել են՝ օգնելու և ազատելու դեպքեր... Մահվան դեպքերի զգալի մասը եղել է անապատում մարդկանց առանց սնունդ և ջուր մնալու պայամաներում:

- Եթե Տորոնտոյի թուրք հանրության կողմից վիճաբանության պլատֆորմ կազմակերպվի և ցեղասպանությանը դեմ մարդիկ ևս շեր կողքին նստեն, կուզենայի՞ք նման նիստում տեղ գրավել:

- Մեկ պայամանով, եթե խոսել ու լսել իմացող մարդիկ լինեն... Պարզ ասեմ, ես մեր ազգի մոտ եթե համալսարանական ուսանողներ չեն, այս հասունությունը չեմ տեսնում:

Ինձ հետ հարց-պատասխանի ձևով զրույց-հավաք կազմակերպեք, կարող է ավելի արդյունավետ լինի, բայց այնտեղ էլ լսել ցանկացողների ներկայության պայամանով: Նախ և առաջ առաջարկում եմ խոսել՝ խոսելու և լսելու շնորքին տիրապետող մի հանրության առջև: Տարօրինակ է, բայց այսպես է...

Թարգմանիչ՝ Կայծակ Մարմարյան